գործոց 'ի ձեռն պաշտօնէից նորին, գրեալ Իլամ և Հէօճ-ճէթ, որով տեղեկացան Արքայ և պաշտօնեայք նորին ամենայն հանդամանաց գործոյն, և 'ի վերջոյ 'ի հաստատութիւն նոցին՝ զգումարելն ժողով նորին ինքեան և զտալն զերկուս Հէօճճէթս, որոց մին առաքեցաւ 'ի Կոստանդինուպոլիս միւսանդամ տեսանել Տէրութեան, դարձեալ գիր, եւ համաձայն նմին հրման Քաղաքապետին վասն Բեթղեհէմի. և զնամակն զոր գրեաց առ Դենպետն. այսոքիկ չէ՞ն բաւական մեզ ասէ մարտնչիլ ընդ քեզ յատենի Տէրութեան, դա՛ր յոր կողմն եւ կամիս։ Դատաւորն փոխեալ զեղանակ բանից իւրոց ասէ. ընդ խաղս ասացի, սակայն և զիս մի թողուք անվախթար։

Լատինք չոքան առ Քաղաքապետն, ուր ժողովեալ էին Դատաւորն և գլխաւորք քաղաքին, և նախատական բանիւք անարգեցին զնոսա, առաւել յանդգնելով ընդդէմ Քաղաքապետին եւ յաւելին ասել՝ միւսանգամ կազմեցէք ժողով 'ի դատապարտութիւն Լատինաց։ Զի դաւադրութեամբ Քաղաքապետին որսացեալ էին զոմանս յայլազգեաց, և խոստացեալ ցրել զառաջին վճիռն։ Սակայն Դատաւորն խորագէտ ծանուցեալ զխորհուրդս նոցա, կերպիւ իւիք դարձոյց զնոսա յետս, և անարգութիւն համարեալ ինքեանց գրեալ ծանուցին Կուսակալին զյանդգնութիւնս Լատինաց։ Այլ նոքա բացեալ զգուռն տաճարին Ս. Յարութեան հանին արտաքս զվիաբանս իւրեանց, եւ կնքեցին զգուռն եկեղեցւոյն, և թողին անդ միայն զերկուս սպասաւորս, և համբաւեցին 'ի քաղաքին թէ Լատինք մեկնին յերուսաղեմէ, զի Հայք տիրեսցեն տեղեաց նոցին, 'ի բերկրութիւն այլազգի կուսակցաց նոցին, և պատրաստ լեցին տալ պատասխանի Տէրութեան և Դեսպանին։ Բայց ոչ ոք հարցանէր 'ի նոցանէ թէ զինչ գործէք։

Եւ յերեկոյին 'ի բանալ Հայոց զգուռն Տաճարին, մուծին 'ի ներքս զերկուս կարգաւորս իբր պահապան կնքոյ դրանն։ Եւ 'ի նմին երեկոյի ածին յերուսաղէմ զբազմաթիւ լեռնականս հարեալ 'ի շղթայս, զորս առաքեալ էր փոխանակ Բդեշխին Իպրահիմ 'ի կողմանց Սամարիոյ 'ի յաղթանակել իւրում 'ի պատերազմին։

Դատաւորն և այլազգիք մինչ ժողովեալ էին յապարանս